

միջոցն է անհատի ճիշտ դաստիարակության գործում: Բարեբախտաբար, «Մայրենի» դասագրքերի հեղինակները, շատ լավ հասկանալով իրենց առաքելությունը, նրբագույն մտնեցում են ցուցաբերել եղենի թեման շոշափելիս, այսինքն՝ նրանք կողքանց չեն անցել, բայց նաև կրտսեր դպրոցի «Մայրենի» դասագրքերում չկան ակներև փաստեր, դեպքերի նկարագրություններ կամ սարսափելի տեսարաններ (իհարկե, նկատի ունենալով երեխաների տարիքային առանձնահատկությունները), այլ նրբին մտնեցումներով սովորողներին հանգեցնում են համապատասխան տրամաբանական եզրակացությունների, այն է՝ դարեր շարունակ հայ ժողովուրդը պայքարել է իր անկախության ու ազատության համար, այդ ճանապարհը հարթ ու դյուրին չի եղել, եղել է դեգերումներով, հերոսամարտերով, ջարդերով լեցուն, բայց, միևնույն ժամանակ, ապագայի նկատմամբ լիահույս հավատով լցված ճանապարհ է եղել ու մնում է:

Օտարաբանացի դրանցից մի քանիսին:

Ահա «Մայրենի-1» դասագրքի «Մեր հայրենիքը Հայաստանն է» թեմատիկ խումբը, որ բացվում է Հայաստանը խորհրդանշող սիմվոլներով՝ հայոց եռագույն դրոշ, գերբ, Կառավարական տուն, Մատենադարան, Տիգրան Մեծ թագավոր, իհարկե, Մեծ և Փոքր Մասիսներ՝ արևով ճառագած: Իրոք, Հայաստան ասելիս՝ ակամա ոտքի ես կանգնում:

Վեցուկես-յոթ տարեկան երեխային քաջածանոթ է գրքի 38-րդ էջի նկարը՝ երկինք խոյացող պուռնաշար, որի գլխին թխպամած երկինք է, կողքին՝ բարդիներ, պտղով ծանրաբեռնված ծիրանենիներ ու ծաղիկներ՝, ծաղիկներ՝ հատկապես ինքը կարմիր, սիրտը՝ սև կակաչներ, և երկու մանչուկ՝ տղա և աղջիկ՝ ծաղկեփնջերը ձեռքներին Օրծեռնակաբերդ շտապելիս: Նկարի տակ հեղինակի՝ Վասի հղումն է սիրելի փոքրիկ բարեկամներին. « Այս հուշարձանին նայելիս՝ մենք հիշում ենք մեր անմեղ գոհերին»:

Մասցալը ուսուցչի գործն է՝ պարզագույն բացատրություններով ուղղորդելու յոթնամյա երեխային, թե ինչ արհավիրք է Հայոց եղենը, երբ է տեղի ունեցել և ինչու:

Հանրակրթության նոր Կրթակարգի պահանջներին համաձայն՝ այսօրվա դասագրքերն օգտագույնում ուսուցումը պետք է տարվի այնպես, որ աշակերտը, ստացած գիտելիքներն ու տեղեկությունները հիմք ընդունելով, ինքը կատարի համապատասխան եզրահանգումներ, այլ ոչ թե սպասի, որ ուսուցիչը պատրաստի դեղատոմսեր տա այս կամ այն երևույթի կամ գործողության վերաբերյալ, այլ խոսքով՝ նախկին ավանդական ուսուցչակենտրոն ուսուցումն այսօր պետք է իր տեղը զիջի աշակերտակենտրոն ուսուցմանը:

Այս պահանջի բավարարմամբ էլ «Մայրենի-2» դասագրքում գետնոված «Մասիս» գործնական զրույցը (էջ 124) ստիպում է աշակերտին մտածել, փնտրել, որոնել և պատասխանել այն հարցերին, թե ինչն է.

- Եթե Մասիս սարի ստորոտից չափենք մինչև գագաթը, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենաբարձր սարն է,
- Եթե Մասիսին նայենք հայի աչքերով, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենագեղեցիկ սարն է,
- Եթե ուզենանք հասնել Մասիս սարին, ապա կտեսնենք, որ նա աշխարհի ամենահեռու սարն է,
- Եթե աշխարհի բոլոր հայերը ցանկանան, որ Մասիսը նորից մերը լինի, ապա կլինի:

Ժողովրդական խոսքն ասում է. «Կարոտից է առաջ գալիս ամեն բան»: Հենց հայրենիքի, հայրենի տան ծխի ու եզերքի կարոտն է պարտադրել «Մայրենի-4» դասագրքի հեղինակներին, որ տասնամյա աշակերտներին ոչ թե իրական էքսկուրսիա կամ արշավի տանեն դեպի Արևմտյան Հայաստան, այլ Արամի դարբին պապի հետ միասին մտովի այցելեն Մասիս լեռան քարանձավ, ուր հավատարիմ

շները կրծում են Արտավազ թագավորի շղթաները, որ ազատեն նրան, հույս են տածում, որ Արտավազը դուրս կգա և Մասիսին կտիրի, ու մենք կունենանք ոչ թե գերի Մասիս, այլ մե ր Մասիսը: Երեխաները անկեղծ ցանկությամբ ուզում են իրեն նք գնալ – ազատել իրենց սուրբ սարը, բայց ո՞վ կթողնի բարձրանալ գերված Մասիսը:

Սակայն դա ժամանակի հարց է, ու նրանց ընդունած որոշումն էլ ապագայական՝ մի մասը կգնա Ագռավաքար՝ Մհերին ազատելու, մի մասը կբարձրանա Մասիս՝ Արտավազին ազատելու, և կիրականան հայի երազանքները, որոնք թոչունների տեսքով ամբողջ աշխարհից գալիս և բույն են հյուսում Մասիսի լանջերին: Ու ճանապարհից չեն շեղվում, որովհետև ճանապարհի ուղղությունը սիրտն է հուշում:

Կյանքում հարազատ ու թանկ բաներ կան, որոնք չես կարող կորցնել, եթե քեզ չպարտադրեն:

Հայի մեր տեսակը մեր հաղթանակների պտուղն է՝ ուսումնաստենչ, ինքնավստահ, հավատավոր: Այս միտքն է արծարծվում Կրեժ Բարայեյանի «Չնվաճված աշխարհամաս» պատմվածքում, որից բերված մի փոքրիկ հատվածը բավական է նորից շեշտադրելու այն տխուր փաստը, որ իրագործվել է 101 տարի առաջ, և առայսօր չի մորմոքվում ցավը. « Աշխարհի բոլոր պապերն էլ գեղեցիկ հեքիաթներ գիտեն: Բայց Արշակ պապն ուրիշ էր: Նա միայն մեկ հեքիաթ գիտեր. «Լինում է, չի՞ լինում՝ լեռների մեջ մոլորված մի գյուղ է լինում: Էս գյուղը միայն մի ճանապարհ է ունենում, էն էլ տանում էր լեռան գագաթ...»: Դա մի տխուր ու անվերջանալի պատմություն էր հեռվում թողած ծննդավայրի, հարազատ մարդկանց, տան ու լեռների մասին: Երբ մամը հուզմունքից ծածկում էր արտավախառն աչքերը, Հակոբիկը ըմբոստացած վեր էր թռչում. «Պա՛պ, ո՞վ հնարեց այդ հեքիաթը, ո՞վ»: Արշակ պապը լռում էր: Հետո պապի հեքիաթն այլ ընթացք է ստանում, որովհետև թոռն ասում է, որ գիտե՛՛ աշխարհում քանի աշխարհամաս կա՝ Եվրոպա, Ասիա, Ամերիկա, Աֆրիկա, Ավստրալիա, հաջորդի անունը դժվար է, մոռանում է:

-Տո՛ւն , - համարյա գոռալով ասում է պապը և շարունակում, -տո՛ւն: Էդ աշխարհամասի անունը ոչ մի գրքում գրված չի, բայց ամենամեծ աշխարհամասն է, ամենասիրունը, ամենախկակականը: Գրքում գրում են էն աշխարհամասի անունը, որը նվաճել են, իսկ տունը չնվաճված աշխարհամաս է:

Թողը հավատում է, որ կա՛ այդպիսի աշխարհամաս՝ չնվաճված, ամենասիրուն, ամենախկակա՞ն, և նկարում է արար աշխարհին այդ տունը, որ մեկ դար առաջ շեն էր, պատերը անտաշ քարից էին, ծեփը՝ հարդախառն ցեխով, դուռը՝ մեկփեղկանի, պատերի ներսում յոթ թախտ էր, հինգ օրորոց, օջախի սալը շիկացած էր, Ջեյրան, Շեկո կովերը, Կարմիր եզր կուշտ էին, Բարո պապը քնած էր, ճիշտ է, բայց ամբողջ օրը ձիու վրա է եղել, նանն էլ դրսում երկանք է աղում: Ահա չնվաճված աշխարհամասի բնակչի կարոտը...

Հովի. Շիրազը կասեր. «Այսքան մոտ եմ, բայց կարոտ եմ Մասիսին...»: Ա՜խ, այս Մասիսը, որից փափկում են սրտերը բոլոր, իսկ ինքը... քար է, ջերմացնում է սրտերը մոլոր, երբ ինքը... սառն է, աշխարհներից հեռավոր-հեռու բոլոր հայերին այստեղ է բերում, երբ ինքն... այստեղ չէ, միաբանության քարոզ է կարողում աշխարհում ցրված հայերին անտուն, երբ որ... կիսված է, որ մեծ սիրտ պես ո՛չ հեռանում է, ո՛չ էլ գալիս է (Գևորգ Էմին) «Ա՜խ, այս Մասիսը», «Մայրենի-4», էջ 76): «Երևի հայրենիքը հենց այն է, որ կորցնելուց հետո այլևս ոչինչ չես ունենա կորցնելու», -ասել է Վարդգես Պետրոսյանը: Այսօր մենք ունենք մեկ աշխարհամասի արժեք ունեցող մի Հայրենիք՝ մի Հայաստան ու մի փոքրիկ Արցախ, բայց Մեծ և Փոքր Մասիսները ձեռք ձեռքի տված կարոտով սպասում են մեր սերնդի հայրենանվեր գործերին: Եվ ինչպես Հրաչյա Մաթևոսյանն է ասում.

«Ես հավատում եմ հավերժ հին ու հավերժ նոր մեր ժողովրդի ու նոր եկող սերնդի գորավոր ճակատագրին»: Հայ ժողովուրդն ունեցել է և կունենա ամենասիրելի հերոսներ, որոնց կմեծարի նրանց կատարած գործերի ու արժանիքների համար այնպես, ինչպես մեծարել է գորավոր քաջ Անդրանիկին՝ ասելով. «Չարին դատող, Ազգին սիրող, Ազգապաշտպան Հայ Անդրանիկ: Հուշարձանիդ մեծ պատվանդան՝ Մասիսն է քեզ միայն արժան» («Մայրենի-3», էջ 98):

Բավական չէ՛ իր ազգի զավակը լինել, պետք է նաև նրա հրաշունչ զինվորը լինել (Գ. Նժդեհ), այնպիսին, ինչպիսին էին հայ նշանավոր ֆիդայիները, հայոց դատավճիռն իրականացնող հայորդիները, հայ դատի նվիրյալները, հայ վրիժառունները, այսօր իրենց պահակակետերում կանգնած տասնութամյա մեր պատանիներն ու զինվորները, մերօրյա հերոսները, որոնց ուխտն է՝ արյան գնով պահպանել մեր ամեն մի թիզ հողը և ոչ միայն պաշտպանել, այլև պահանջատերը լինել կորցրածների համար, չնվաճված հայրենիքի համար: 21-րդ դարի մատաղ սերունդը այլ հոգեբանություն ունի, այլ դաստիարակություն է ստանում, նա ավելի ազատ է, անկախ, ինքնիշխան, և համոզված պետք է լինենք, որ վաղ թե ուշ նա կապրի եթե ոչ ծովից ծով, ապա իր պատմական Հայաստանում, իր Արարատի լանջերին:

Այս ոգով դաստիարակելուն նպաստում են նաև «Մայրենի» դասագրքերը:

Գրականություն

1. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Չիբուխյան Կ. - Մայրենի-4, Երևան, 2009
2. Թորոսյան Կ., Սարգսյան Վ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե. - Մայրենի-3, Երևան, 2008
3. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Գրիգորյան Ս., Խաչատրյան Հ. - Մայրենի-2, Երևան, 2007
4. Սարգսյան Վ. - Մայրենի-1, Երևան, 2006: